ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/90

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 25.06.2018թ. թիվ 03/26-3/11519-18 գրությամբ «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 25.06.2018թ. թիվ 09/760 գրության հիման վրա, 25.06.2018թ. նախաձեռնել է «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. <u>Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամը 25.06.2018թ. թիվ 09/760 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կողմից հայտարարված ԳՀԱՊՁԲ-2018/16-6-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգին հայտ է ներկայացրել «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն: Գնահատող հանձաժողովի 14.05.2018թ. թիվ 4 որոշմամբ 48-րդ և 52-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն: Հանձնաժողովը 06.06.2018թ. հարցում է կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին: Գնահատող հանձնաժողովը 23.05.2018թ. թիվ 5 որոշմամաբ արձանագրել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.05.2018թ. տրված եզրակացության համաձայն՝ «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների չափը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված շեմը»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամ լիազորված ներկայացուցիչ Անահիտ Հարությյանը:

3. <u>«Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 25.06.2018թ. գրությամբ դիմել է «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.06.2018թ. թիվ 03/26-3/11519-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել

Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի տնօրեն Մոսինյան Գեղամը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/90 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 25.06.2018թ. թիվ 03/26-3/11519-18 գրությունը և կից փաստաթղթերը, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի 25.06.2018թ. թիվ 09/760 գրությունը, ԳՀԱՊՁԲ-2018/16-6-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ԳՀԱՊՁԲ-2018/16-6-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 14.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 և 23.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությունները, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.05.2018թ. տրված եզրակացությունը.

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կարիքների համար՝ բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԳՀԱՊՁԲ-2018/16-6-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ԳՀԱՊՁԲ-2018/16-6-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 14.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության՝

- 2-րդ կետով որոշել է ընթացակարգի 48-րդ և 52-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ին:

- 3-րդ կետով որոշել է՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցնող մասնակցի ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.05.2018թ. տրամադրած եզրացության համաձայն «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 167.145 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 23.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն ունի օրենքով սահմանված չափը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն, որի հիմքով որոշել է մերժել վերջինիս կողմից ներկայացված հայտը:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի մոտ արձանագրված պարտավորությունն առաջացել է այն պատճառով, որ Ընկերությունը սահմանված ժամկետում (10.04.2018թ.) կատարել ԱԱՀ-ի մասով հարկային պարտավորությունների վճարում՝ 2.634.400 ՀՀ դրամ գումարի չափով, սակայն քանի որ Ընկերությունը հարկային մարմնին ԵՏՄ ներմուծման մասով ներկայացրել էր հաշվետվություն, հարկային մարմնի կողմից ներդրված համակարգը վճարված գումարները գանձել է նաև այդ հարկատեսակի գծով՝ մասնավորապես ԵՏՄ ներմուծումից առաջացած ԱԱՀ-ի գծով, մինչդեռ նշված պարտավորությունը Ընկերությունը կարող էր մարել մինչև 20.05.2018թ.:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ին տրված քաղվածքը 27.04.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով պարտավորությունների վերաբերյալ, որի համաձայն Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում

հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կարիքների համար՝ բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԳՀԱՊՁԲ-2018/16-6-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ»

որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամա¬դրում է հարցման մասին սույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 7.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների

մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.
- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն ՝ «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 26.04.2018թ. դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություն՝ 167.145 ՀՀ դրամ գումարի չափով:

- «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն 10.04.2018թ. կատարել է 2.634.400 ՀՀ դրամ գումարի չափով վճարում:
- «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Ընկերության վճարված գումարը ԵՏՄ ներմուծման ԱԱՀ-ի գծով պարտավորությունների մարմանն ուղղելու արդյունքում, որը Ընկերությունը կարող էր վճարել մինչև 20.05.2018թ.:
- «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն 27.04.2018թ. դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերության ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 26.04.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունն առաջացել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Ընկերության վճարված գումարները ԵՏՄ ներմուծման ԱԱՀ-ի գծով պարտավորությունների մարմանն ուղղելու արդյունքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության կողմից անկանխատեսելի իրավիճակից բխող հետևանքի առաջացման հանգամանքով, հետևաբար «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.06.2018թ. թիվ 03/26-3/11519-18 գրությամբ «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ